ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

Ք. Երևան 03.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/167

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.11.2018թ. թիվ 27/26-3/20009-18 գրությամբ «Մավշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի 15.10.2018թ. թիվ 8.1-429 և 24.10.2018թ. թիվ 8.1-450 գրությունների հիման վրա, 03.11.2018թ. թիվ 27/26-3/20009-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Մավշին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Մավշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Մավշին» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 16.11.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կողմից վերջինիս կարիքների համար հայտարարվել է կապալային աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով գնանշման հարցում, որի հրավերի տեքստը հաստատվել է գնանշման հարցման հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 14-ի որոշմամբ:

Վերոհիշյալ գնանշման հարցման 1-ին չափաբաժնի մասով «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի և «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Հայցվոր) միջև 18.06.2018թ. կնքվել է կապալային աշխատանքների կատարման «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով պայմանագիր:

Վերոհիշյալ պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ կապալառուն («ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն) պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավել-վածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի թիվ 1 հավելվածի համաձայն՝ սահմանվել է «Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների» կատարման աշխատանքների նկարագիրը: Համաձայն նշված հավելվածի՝ գնման առարկա է հանդիսանում՝ «Դիտարկման ծառայության ՄՌ-11 ԱԱ ռադարի ալեհավաքի էստակադայի և գմբեթի վերանորոգման աշխատանքները»: Գնման առարկայի բնութագիր՝ ՄՌ-11 ԱԱ օյեկտը գտնվում է Արարատի մարզի Հովտաշատ գյուղում: Աշխատանքներն իրենց մեջ ներառում են դիտարկման ծառայության ՄՌ-11 ԱԱ ռադարի ալեհավաքի գմբեթի հին ներկից մաքրում, գմբեթի ներկում ռադիոթափանցիկ ներկով՝ ХП-5184 էմալով՝ համաձայն ТУ 6-10-1887-83 տեխնիկական պայմանների, ինչպես նաև էստակադայի հին ներկից մաքրում և էստակադայի ներկում ՀԼ-132 էմալով: Վերոնշյալ աշխատանքների համար բոլոր

օգտագործվող նյութերը պետք է ունենան համապատասխան հավաստագրեր և անցած լինեն լաբորատոր փորձարկումներ: Նյութերի ապահովումն իրականացվում է կապալառուի ուժերով»:

Պայմանագրի թիվ 1.1 հավելվածով սահմանվել է դիտարկման ծառայության ՄՌ-11 ԱԱ ռադարի ալեհավաքի էստակադայի և գմբեթի վերանորոգման աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը:

«ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով գնանշման հարցման ծավալաթերթ-նախահաշվով սահմանված՝ դիտարկման ծառայության ՄՌ-11ԱԱ ռադարի ալեհավաքի էստակադայի և գմբեթի վերանորոգման աշխատանքների կատարման համար նախատեսված նախահաշվային արժեքում հիմնավորված փոփոխություն կատարելու խնդրանքով՝ «Մավշին» ՍՊԸ-ն ս.թ. օգոստոսի 6-ին գրություն է ներկայացրել «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենին, որով հայտնել է հետևյալը.

«ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն տեղեկացնում է Ձեզ, որ «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» դիտարկման ծառայության ՄՌ-11ԱԱ ռադարի ալեհավաքի էստակադայի և գմբեթի վերանորոգման աշխատանքների ծավալաթերթում առկա են սխալներ, մասնավորապես, մի շարք նյութերի մակնիշները բացակայում են /էլաստիկ նյութ, մածիկ/, ինչպես նաև ХП-5184 ռադիթափանցիկ ներկի արժեքը անհամեմատ ցածր գին է նշված: Մեր կողմից ուսումնասիրվել են ներկի արտադրող ընկերություններից տրված գները, որոնք գրեթե 6 անգամ ավելի թանկ են, քան նախահաշվում նշված գինը: Պարզվել է, որ նախահաշվում հաշվարկված է միայն ХП-5184 ներկի արժեքը, առանց իր պնդարարի, որի մակնիշը նույնպես նշված չի: Այդ ներկի համար նախատեսված է հատուկ մակնիշի լուծիչ, սակայն նախահաշվում տրված է սովորական լուծիչի գին, որը եթե լուծվի այդ ներկի հետ, ապա ներկը կդառնա ոչ պիտանի: Խնդրում եմ Ձեզ ուսումնասիրել այս խնդիրը, և փոփոխություններ կատարել նախահաշվի մեջ» (պատճեն կցվում է):

Ի պատասխան վերոնշված գրությանը՝ «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ն 13.08.2018թ.թիվ 8.1-338 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր գրության՝ հայտնում ենք, որ «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի և «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 18.06.2018թ.-ին կնքված թիվ 2.127 գնման պայմանագրի «Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների» կատարման

նկարագիրը և ծավալաթերթ-նախահաշիվը ներառված են եղել «ՀՄՆ-ԳՀՄՇՁԲ-06/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերում, որի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար անհրաժեշտ էր ղեկավարվել ՀՀ «Գնումների մասին» օրենքի 29-րդ հոդվածի պահանջներով՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում, որի արդյունքում պատվիրատուի կողմից տրամադրվում է պարզաբանում կամ անհրաժեշտության դեպքում հրավերում կատարվում է համապատասխան փոփոխություններ: Սակայն Ձեր կողմից նշված ժամկետում գրավոր պարզաբանում չի պահանջվել: Բացի այդ, Ձեր կողմից 20.06.2018թ. ներկայացվել է «ՀԱՆ-ԳՀՄՇՁԲ-06/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերի հավելված 4-ով սահմանված ձևով գնային առաջարկ, որով դուք հաստատել եք, որ Ձեր կողմից ուսումնասիրվել է «ՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը և առաջարկել եք նշված աշխատանքները իրականացնել 27 984 000 ՀՀ դրամով, որի հիման վրա էլ 2018թ. հունիսի 18-ին կնքվել է թիվ 2.127 գնման պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրին կից թիվ 1 («Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման նկարագիրը») և թիվ 1.1 («Ծավալաթերթ-նախահաշիվը») հավելվածները: Ինչ վերաբերվում է ХП–5184 ներկի արժեքին և բաղադրությանը, ապա հայտնում ենք, որ հրավերի, ինչպես նաև պայմանագրի շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման նկարագրում նշված է. «Գմբեթի ներկում ռադիոթափանցիկ ներկով՝ ХП-5184 էմալով՝ համաձայն ТУ 6-101887-83 տեխնիկական պայմանները»: ТУ 6-101887-83 տեխնիկական պայմաններում մանրամասն ներկայացված է ՃՈ–5184 էմալը և դրա բաղադրիչ նյութերը: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ցանկացած կազմակերպություն մրցույթի մասնակցելիս գնային առաջարկը ներկայացնում է գնման առարկայի բնութագրերի համաձայն կատարված հաշվարկների հիման վրա, առավել ևս, երբ կնքվում է պայմանագիր: Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն հանգամանքը ՀՀ գնումների մասին օրենսդրությունը չի նախատեսում կնքված պայմանագրի գնի վերահաշվարկ, առավել ևս ավելացում, որը սահմանված է կնքված պայմանագրի 5.2 կետով, առաջարկում ենք որպես կապալառու կատարել

«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի և «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 18.06.2018թ.-ին կնքված թիվ 2.127 գնման պայմանագրով ստանձնած պարտավորությունները»:

13.08.2018թ. «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն կրկին դիմում է ներկայացրել «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենին, որով մասնավորապես հայտնել է հետևյալը.

«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի և «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 18.06.2018թ. կնքվել է «ՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագիր (այսուհետ նաև Պայմանագիր):

Պայմանագրի.

•1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված աշխատանքների նկարագրով և թիվ 1.1 հավելվածով սահմանված ծավալաթերթ նախահաշվով նախատեսված «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի դիտարկման ծառայության ՄՌ-11 ԱԱ ռադարի ալեհավաքի էստակադայի և գմբեթի վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

•1.3 կետի համաձայն՝ սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված թիվ 2):

Պայմանագրի 3.2 կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է.

•3.2.1 կետի համաձայն՝ աշխատանքը կատարելիս՝ աջակցել Ընկերությանը սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

Պայմանագրի թիվ 1.1 հավելվածի դիտարկման ծառայության ՄՌ-11 ԱԱ ռադարի ալեհավաքի էստակադայի և գմբեթի վերանորոգման աշխատանքների ծավալաթերթ-նախահաշվի համաձայն՝ գմբեթի մակերևույթների ներկում ռսպիոթափանցիկ ՃԲ-5184 էմալով երկու անգամ- 5600ՀՀ դրամ /1 միավորի արժեք/, 6169300 ՀՀ դրամ /ընդհանուր արժեք/:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 707-րդ հոդվածի համաձայն՝

1.Կապալի պայմանագրում նշվում են կատարման ենթակա աշխատանքի գինը կամ այն որոշելու եղանակները: Պայմանագրում նման ցուցումների բացակայության դեպքում գինը որոշվում է սույն օրենսգրքի 440-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

2.Աշխատանքի գինը կարող է որոշվել նախահաշիվ կազմելու միջոցով:

Այն դեպքում, երբ աշխատանքը կատարվում է կապալառուի կազմած նախահաշվին համապատասխան, նախահաշիվն ուժի մեջ է մտնում և պայմանագրի մաս է դառնում պատվիրատուի կողմից հաստատվելու պահից:

3.Աշխատանքի գինը (նախահաշիվը) կարող է լինել մոտավոր կամ կայուն:

4.Եթե առաջացել է լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն, որի պատճառով էապես ավելացել է աշխատանքի համար սահմանված մոտավոր գինը, կապալառուն պարտավոր է այդ մասին ժամանակին զգուշացնել պատվիրատուին:

Պատվիրատուն, որը համաձայն չէ կապալի պայմանագրում նշված գնի ավելացման հետ, իրավունք ունի հրաժարվել պայմանագրից: Այդ դեպքում կապալառուն կարող է պատվիրատուից պահանջել վճարելու աշխատանքի կատարած մասի գինը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 741-րդ հոդվածի համաձայն՝

1.Կապալառուն պարտավոր է շինարարությունը և դրա հետ կապված աշխատանքներն իրականացնել աշխատանքի ծավալը, բովանդակությունն ու դրան ներկայացվող այլ պահանջները սահմանող նախագծային փաստաթղթերին և աշխատանքի գինը որոշող նախահաշվին համապատասխան:

Շինարարական կապալի պայմանագրում այլ ցուցումների բացակայության դեպքում ենթադրվում է, որ կապալառուն պարտավոր է կատարել նախագծային փաստաթղթերում և նախահաշվում նշված բոլոր աշխատանքները:

2.Շինարարական կապալի պայմանագրով պետք է սահմանված լինեն նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը, ինչպես նաև պետք է նախատեսված լինի, թե կողմերից որը ու ինչ ժամկետում պետք է ներկայացնի համապատասխան փաստաթղթերը:

3.Կապալառուն, շինարարության ընթացքում հայտնաբերելով նախագծային փաստաթղթերում հաշվի չառնված աշխատանքներ և դրանց հետ կապված լրացուցիչ աշխատանքներ կատարելու և շինարարության նախահաշվային արժեքն ավելացնելու անհրաժեշտություն, պարտավոր է այդ մասին հաղորդել պատվիրատուին:

Տասնօրյա ժամկետում պատվիրատուից իր հաղորդման պատասխանը չստանալու դեպքում՝ կապալառուն պարտավոր է դադարեցնել համապատասխան աշխատանքները՝ պարապուրդից առաջացած վնասները հաշվարկելով պատվիրատուի հաշվին, եթե դրա համար այլ ժամկետ սահմանված չէ շինարարական կապալի պայմանագրով:

Պատվիրատուն ազատվում է այդ վնասները հատուցելու պարտականությունից, եթե ապացուցում է լրացուցիչ աշխատանքներ կատարելու անհրաժեշտության բացակայությունը:

4.Սույն հոդվածի 3-րդ կետում սահմանված պարտականությունները չկատարած կապալառուն զրկվում է պատվիրատուից իր կատարած լրացուցիչ աշխատանքների վարձատ-րություն և դրանցից բխող վնասների հատուցում պահանջելու իրավունքից, եթե չի ապացուցում, որ անհապաղ գործողությունների անհրաժեշտությունը բխել է պատվիրատուի շահերից, մասնավորապես, պայմանավորված է եղել այն պարագայով, որ աշխատանքը դադարեցնելը կարող էր հանգեցնել շինարարական օբյեկտի վնասման կամ փլուզման:

5.Լրացուցիչ աշխատանքներ կատարելու և դրանց վարձատրության համար պատվիրատուի համաձայնության դեպքում կապալառուն իրավունք ունի հրաժարվել դրանք կատարելուց միայն այն դեպքերում, երբ այդպիսիք չեն մտնում կապալառուի մասնագիտական գործունեության բնագավառի մեջ, կամ կապալառուն չի կարող կատարել իրենից անկախ պատճառներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 742-րդ հոդվածի համաձայն՝

1.Պատվիրատուն իրավունք ունի նախագծային փաստաթղթերում փոփոխություններ կատարել՝ պայմանով, որ դրանցից բխող լրացուցիչ աշխատանքներն իրենց արժեքով չգերազանցեն նախահաշվում նշված շինարարության ընդհանուր արժեքի տասը տոկոսը և չփոխեն շինարարական կապալի պայմանագրում նախատեսված աշխատանքների բնույթը:

2.Նախագծային փաստաթղթում սույն հոդվածի 1-ին կետում նշված ծավալից ավելի փոփոխությունները կատարվում են կողմերի համաձայնությամբ կազմված լրացուցիչ նախահաշվի հիման վրա:

3.Կապալառուն, սույն օրենսգրքի 466-րդ հոդվածին համապատասխան, իրավունք ունի պահանջել վերանայելու նախահաշիվը, եթե իրենից անկախ պատճառներով աշխատանքի արժեքն ավելի, քան տասը տոկոսով գերազանցել է նախահաշվով նախատեսվածից:

4. Կապալառուն իրավունք ունի պահանջել հատուցելու նախագծային փաստաթղթերի թերությունները պարզելու և դրանք վերանայելու հետ կապված ողջամիտ ծախսերը:

Որպես ապացույց, «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն ներկայացնում է /Լակոկրասկա/ ընկերության կողմից ներկայացված փաստաթուղթը: Ըստ այդ փաստաթղթի՝ ХП-5184 ներկի հետ անհրաժեշտ է խառնել МСН–7–80 պնդացուցիչը, որը չի նախատեսվել ծավալաթերթ-նախահաշվով: Առանց այդ խառնուրդի հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքի: Հնարավոր է կիրառել շատ ավելի մատչելի պնդացուցիչներ, սակայն որակ ապահովել հնարավոր չի լինի այդ պարագայում: Քանի որ ծավակլաթերթ-նախահաշվով չի նշվել պնդացուցիչի տեսակը, ապա այս պարագայում ընկերությունը կարող է խառնել այլ պնդացուցիչ, սակայն չի ցանկանում անել դա:

Ձեր թույլտվությամբ ընկերությունը կարող է խառնել այլ պնդացուցիչ նյութ, քանի որ այն չի նախատեսվել ծավալաթերթ-նախահաշվով, կամ կարող է այլ ներկի տեսակով ներկել, որը Պատվիրատուն կնախատեսի նախահաշվային գների համապատասխան:

Ելնելով վերոգրյալ իրավական հիմքերից և փաստական հանգամանքներից՝ առաջարկում ենք Ձեզ առաջնորդվել Պայմանագրի և քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված պահանջներով և կայացնել համապատասխան որոշում» (պատճեն կցվում է):

Ի պատասխան վերոնշված դիմումի՝ «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ն 23.08.2018թ. թիվ 8.1-360 գրությամբ պատասխանել է.

«Ի պատասխան Ձեր 13.08.2018թ.մտից 819 գրության՝ հայտնում ենք, որ գրությամբ բարձրացված հարցի վերաբերյալ «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ն իր դիրքորոշումն արդեն իսկ հայտնել էր Ձեր նախորդ գրության պատասխան գրությամբ և ներկայումս էլ «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի դիրքորոշումը չի փոխվել: Ինչ վերաբերվում է ներկի բաղադրությանը, ապա կրկին նշենք, որ Ձեր իսկ գրությամբ ներկայացված ООО «ТД ЛАКОКРАСКА-Я» կազմակերպության կողմից տրված ХП-5184 էմալի բնութագրում նշված է, որ ХП–5184 էմալն արտադրվում է կիսաֆաբրիկատ էմալի և հատուկ պնդացուցիչի (МСН-7-80) տեսքով: Այսինքն ХП-5184 էմալը դա կիսաֆաբրիկատ էմալից և հատուկ պնդացուցիչից (/МСН–7–80) բաղկացած նյութ է, այլ ոչ թե միայն կիսաֆաբրիկատ էմալն է, ինչպես դուք նշել եք Ձեր գրությամբ: Պայմանագրի շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման

աշխատանքների կատարման նկարագրում նշված է. «Գմբեթի ներկում ռադիոթափանցիկ ներկով՝ ХП–5184 էմալով՝ համաձայն ТУ-6–101887-83 տեխնիկական պայմանների»:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ևս մեկ անգամ առաջարկում ենք որպես կապալառու կատարել «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի և «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 18.06.2018թ.-ին կնքված թիվ 2.127 գնման պայմանագրով ստանձնած պարտավորությունները» (պատճեն կցվում է):

Ուսումնասիրով «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի կողմից ներակայացված պատասխանները՝ «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն ս.թ. սեպտեմբերի 18-ին կրկին անգամ դիմել է «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ին՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ ծավալաթերթ-նախահաշիվով նախատեսված «Դիտարկման ծառայության ՄՌ-11 ԱԱ ռադարի ալեհավաքի էստակադայի, գմբեթի վերանորոգման աշխատանքների վերլուծության և վերանորոգման ենթակա օբյեկտի՝ դիտարկման ծառայության ՄՌ-11 ԱԱ ռադարի ալեհավաքի էստակադայի, գմբեթի զննության արդյունքում «Մավշին» ՍՊԸ-ն հայտնաբերել է նախագծային փատաթղթերում հաշվի չառնված աշխատանքներ և դրա հետ կապված լրացուցիչ աշխատանքներ կատարելու և, համապատասխանաբար, շինարարության նախահաշվային արժեքն ավելացնելու անհրաժեշտություն:

Ի հավաստումն վերոհիշյալի՝ «Մավշին» ՍՊԸ-ն ներկայուցնում է «Լակոկրասկա» ընկերության կողմից տրամադրված տեղեկությունը, որի համաձայն ХП-5184 ներկը օգտագործելուց առաջ, մակերևույթին պետք է քսել նախաներկ ХП-0206: Առանց այդ նախաներկի չի թույլատրվում քսել ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ХП-5184 ներկը: Նախահաշվում ընդհանրապես նշված չի եղել, որ պետք է օգտագործել նախաներկ, որի արժեքը կազմում է 2750 ռուբլի /19387/ դրամ՝ առանց ԱԱՀ-ի, և տեղափոխման ծախսերի (լրացուցիչ աշխատանք՝ լրացուցիչ նյութով՝ լրացուցիչ արժեքով):

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ ХП-5184 ներկը լուծելու համար օգտագործում է պնդարար, իսկ ծավալաթերթ-նախահաշվում նշված չի պնդարարի անվանումը: «Լակոկրասկա» ընկերությունը տեղեկացնում է, որ ХП-5184 ներկը պետք է օգտագործել միայն МСН-7-80 պնդարարով: Ուրիշ պնդարար օգտագործելու դեպքում աշխատանքների որակը հնարավոր չի լինի ապահովել: МСН-7-80 պնդարարի

գինը նախահաշվում նշված չէ, սակայն այդ կետը առանձին պետք է նշվեր: MCH-7-80 պնդարարի արժեքը կազմում է 8500 ռուբլի /59925/ դրամ առանց ԱԱՀ-ի և տեղափոխման ծախսերի:

Անհրաժեշտ է նշել, որ Ծավալաթերթ-նախահաշվում նշված է, որ պետք է օգտագործել ռադիոթափանցիկ ծեփամածիկ, որի անվանումը նույնպես նշված չի: Նաև տեղեկացնում ենք Ձեզ, որ գմբեթի կառուցվածքը այնպիսին է, որ ծեփամածիկ օգտագործելիս, այն կարճ ժամանակում տալու է ճաքեր: Մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ այդպիսի ծեփամածիկ գոյություն չունի:

Հայտնում ենք, որ «Մավշին» ՍՊԸ-ի կողմից սույն գրությամբ ներկայացված լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտության և ներկայացված այլ փաստարկների հետ համաձայն է նաև տվյալ վերանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացվող ընկերությանը՝ «ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ն, ինչը հավաստվում է համապատասխան գրությամբ (կցվում է):

Սույն գրությանը կից ներկայացվում է անհրաժեշտ լրացուցիչ աշխատանքների արժեքները՝ համապատասխան նյութերի արժեքներով հանդերձ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 707-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե առաջացել է լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն, որի պատճառով էապես ավելացել է աշխատանքի համար սահմանված մոտավոր գինը, կապալառուն պարտավոր է այդ մասին ժամանակին զգուշացնել պատվիրատուին: Պատվիրատուն, որը համաձայն չէ կապալի պայմանագրում նշված գնի ավելացման հետ, իրավունք ունի հրաժարվել պայմանագրից: Այդ դեպքում կապալառուն կարող է պատվիրատուից պահանջել վճարելու աշխատանքի կատարած մասի գինը:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 707-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով՝ սույն գրությամբ պաշտոնապես նախազգուշացնում ենք լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտության մասին, որի արդյունքում ավելանում է պայմանագրով սահմանված գինը և միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 707-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն՝ «Մավշին» ՍՊԸ-ն խնդրում է լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտությունից ելնելով՝ համապատասխանաբար ավելացնել «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային

աշխատանքների գնման պայմանագրով սահմանված գինը կամ պայմանագրում նշված գնի ավելացման հետ համաձայն չլինելու դեպքում՝ հրաժարվել «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրից» (պատճեն կցվում է):

Վերոհիշյալ գրությանը կից «Մավշին» ՍՊԸ-ն ներկայացրել է սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող «ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ի գրությունը, որի համաձայն.

«ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ում ուսումնասիրվել է Ձեր գրությունը, գրությանը կից ներկայացված համապատասխան փաստաթղթերը, այդ թվում նաև «Լակոկրասկա» ընկերության գրությունները, ինչպես նաև զննվել է վերանորոգման ենթակա օբյեկտը:

Հայտնում ենք, որ «ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ն համաձայն է, որ «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի և «Մավշին» ՍՊԸ-ի միջև 18.06.2018թ. կնքված «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրի շրջանակներում անհրաժեշտ է իրականացնել ծավալաթերթ-նախահաշվով չնախատեսված լրացուցիչ վերանորոգման աշխատանքներ՝ համապատասխանաբար լրացուցիչ նյութերով, առանց որոնց հնարավոր չի լինի ապահովել վերանորոգման աշխատանքների համապատասխան արդյունքը և որակը:

Գտնում ենք, որ ХП-5184 ներկը օգտագործելուց առաջ, մակերևույթին պետք է քսել նախաներկ ХП-0206, ինչը ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված չէ: ХП-5184 ներկը պետք է օգտագործել միայն МСН-7-80 պնդարարով, քանզի այլ պնդարար օգտագործելու դեպքում աշխատանքների որակը հնարավոր չի լինի ապահովել, մինչդեռ МСН-7-80 պնդարարի գինը նախահաշվում նշված չէ:

Վերանայման է ենթակա նաև Ծավալաթերթ-նախահաշվում նշված ռադիոթափանցիկ ծեփամածիկի օգտագործման հարցը, քանզի դրա անվանումը նույնպես նշված չի, իսկ վերանորոգման ենթակա գմբեթի կառուցվածքը այնպիսին է, որ ծեփամածիկ օգտագործելիս, այն կարճ ժամանակում, իրոք, կարող է տալ ճաքեր:

Վերոհիշյալը, անկասկած, կառաջացնի «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրով սահմանված գնի ավելացում»:

Ի պատասխան «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն 18.09.2018թ. գրության՝ «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ն հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր N 877 գրության ևս մեկ անգամ հայտնում ենք, որ «ՀայուսԷրոնավիգացիա» ՓԲԸ-ն բարձրացրած հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը չի փոխել: Ձեր բերած այն փաստարկի, որ «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն հայտնաբերել է նախագծային փաստաթղթերում հաշվի չառնված աշխատանքներ, որը կբերեր նախահաշվային արժեքն ավելացնելու անհրաժեշտություն, կրկին անգամ Ձեզ տեղեկացնում ենք, որ «Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների» իրականացման նախահաշիվը և աշխատանքների կատարման նկարագիրը ներառված է եղել «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերում, որի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար անհրաժեշտ էր ղեկավարվել համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի հոդված 29-ի՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում, որի արդյունքում պատվիրատուի կողմից տրամադրվում է պարզաբանում կամ անհրաժեշտության դեպքում հրավերում կատարվում է համապատասխան փոփոխություններ: Սակայն Ձեր կողմից նշված ժամկետում գրավոր պարզաբանում չի պահանջվել:

Ձեր կողմից «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերի հավելված 4-ով ներկայացվել է գնային առաջարկ, որով դուք հաստատելեք, որ Ձեր կողմից ուսումնասիրվել է «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկվել է նշված աշխատանքները իրականացնել 27 984 000 ՀՀ դրամով:

Ձեր կողմից 20.06.2018թ ներկայացված հայտի հիման վրա՝ սույն թվականի հուլիսի 18-ին ստորագրվել և կնքվել է թիվ 2.127 գնման պայմանագիրը, պայմանագրին կից հավելված 1-ը (Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման նկարագիրը), ինչպես նաև թիվ 1.1-ը (Ծավալաթերթ–նախահաշիվը): Ուստի ցանկացած անհամաձայնություն կամ անհամապատասխանություն պետք է հայտնվեր՝ համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի հոդված 29-ի պահանջների:

Ինչ վերաբերվում է Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման նկարագրում նշված «Գմբեթի ներկում ռադիոթափանցիկ ներկով՝ ХП-5184 էմալով՝ համաձայն ТУ 6-101887-83 տեխնիկական պայմաններին նշենք, որ տեխնիկական

պայմաններում մանրամասն ներկայացված է ХП-5184 էմալը և նրա օգտագործման մեթոդը, որով ղեկավարվել է հեղինակը՝ նախագծա-նախահաշվային աշխատանքները իրականացնելիս: Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ ХП-5184 էմալը լուծելու համար պետք է օգտագործվի պնդարար, ապա նշենք, որ այդ պնդարարի վերաբերյալ տվյալները տրված են էմալի տեխ. պայմանների մեջ, որը նախահաշվում արտացոլված է լուծիչի տեսքով և ըստ այդ պայմանների՝ այն МСН-7-80 պնդարարն է: Ուստի Ձեր կողմից ներկայացված «Լակոկրասկա» մասնավոր կազմակերպության տրամադրված տեղեկությունը (կամ կարծիքը) չի կարող իրավական հիմք հանդիսանալ, նամանավանդ որ այն վավերացված է Ձեր կազմակերպության կնիքով: ТУ 6-101887-83 տեխ. պայմանները կցվում են (16 էջ):

Տեխ. հսկողությունն իրականացնող «ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ի Ձեզ հասցեագրված նամակին նշենք, որ համաձայն ՀՀ Քաղաքաշինության նախարարության 28.04.1998թ-ի թիվ 44 հրամանի՝ «Շինարարության որակի տեխ. հսկողության իրականացման հրահանգ»-ի 3-րդ գլխի 3.4 կետի՝ տեխնիկական հսկողություն իրականացնողն իրավասու չէ փոփոխություններ մտցնել կամ թույլատրել նախագծից ցանկացած շեղումներ, ինչպես նաև միջամտել կառուցապատողի՝ շինարարության հետ կապված ֆինանսատնտեսական գործունեությանը: Հետևությունները թողնում ենք Ձեր հայեցողությանը:

Ըստ Ձեր կողմից նշված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 707-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե առաջացել է լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն..., հիշատակում ենք, որ ըստ էմալի ներկայացված տեխնիկական պայմանների՝ նախաներկում չի պահանջվում, ուստի լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն չկա:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք հնարավորինս հակիրճ ժամկետներում պատասխանել Ձեր հետագա անելիք գործողությունների մասին»:

Այնուհետև «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն իր 28.09.2018թ. գրությամբ «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ին հայտնել է հետևյալը.

«Նախորդ գրությամբ Ձեզ աջարակվել էր, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 707-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտությունից ելնելով՝ համապատասխանաբար ավելացնել «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրով

սահմանված գինը կամ պայմանագրում նշված գնի ավելացման հետ համաձայն չլինելու դեպքում՝ հրաժարվել «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրից:

Սակայն դուք հրաժարվել եք, հիմք ընդունել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 707-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, կատարել նշված հոդվածով նախատեսված գործողություններից մեկը:

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ նման բացթողումներով, առանց անհրաժեշտ լրացուցիչ աշխատանքների կատարմանը՝ դիտարկման ծառայության ՄՌ-11 ԱԱ ռադարի ալեհավաքի էստակադայի, գմբեթի վերանորոգման աշխատանքների արդյունքը կարող է լինել ոչ բավարար, եթե անգամ ոչ օբյեկտի հանձնման-ընդունման փուլում, ապա մեծ հավանականությամբ, որոշ ժամանակահատված հետո:

Պետք է փաստել, որ նման մտահոգություն ունի նաև տվյալ վերանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացվող ընկերությունը՝ «ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ն, ով համապատասխան գրությամբ փաստել է ներկայացված լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտությունը, և վերոհիշյալ գրությունը ներկայացվել է որպես մասնագիտական կարծիք մի ընկերության կողմից, ում վրա դրված է աշխատանքի արդյունքի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելը և ով լիարժեք կիսում է մեր մտահոգությունը, որ առանց մեր կողմից նշված բացողումները վերացնելու՝ հնարավոր չէ որակով աշխատանքի արդյունք ունենալ: Ուստի Ձեր կողմից վկայակոչված ՀՀ քաղաքաշինության նախախարության 28.04.1998թ. թիվ 44 հրամանը նշված դեպքին չի վերաբերում, քանզի «ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ի կողմից տրվել է մասնագիտական կարծիք, ոչ թե փոփոխություններ են մտցվել աշխատանքի նախագծում:

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամնքի վրա, որ Ձեր կողմից վկայակոչված և գրությանը կցված ТУ 6-101887-83 տեխնիկական պայմանները ուժը կորցրել են դեռևս 20.05.1988թ., ուստի երեսուն տարի անց որպես իրավական հիմք վկակոչվել չեն կարող:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ Ձեր 24.09.2018թ. թիվ 8.1-395 գրությամբ ընդհանրապես քննարկման առարկա չի դարձվել ռադիոթափանցիկ ծեփամածիկի վերաբերյալ արված դատողությունները:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 707-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշ-տությունից ելնելով՝ համապատասխանաբար ավելացնել «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրով սահմանված գինը կամ պայմանագրում նշված գնի ավելացման հետ համաձայն չլինելու դեպքում՝ հրաժարվել «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրից»:

Ստանալով պատասխան Ընկերության 28.09.2018թ. գրությանը՝ 05.10.2018թ. «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ին հասցեագրված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 707-րդ, 467-րդ և 468-րդ հոդվածներով նախատեսված իրավակարգավորումները՝ «Մավշին» ՍՊԸ-ն առաջարկում է սույն գրությունը ստանալուց հետո եռօրյա ժամկետում կնքել «Մավշին» ՍՊԸ-ի և «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի միջև 18.07.2018թ. կնքված Կապալային աշխատանքների կատարման գնման թիվ 2.127 պայմանագիրը (ծածկագիրը՝ ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18) լուծելու մասին համաձայնագիր»:

Իրավական հիմքերը և հիմնավորումները.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 707-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե առաջացել է լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն, որի պատճառով էապես ավելացել է աշխատանքի համար սահմանված մոտավոր գինը, կապալառուն պարտավոր է այդ մասին ժամանակին զգուշացնել պատվիրատուին: Պատվիրատուն, որը համաձայն չէ կապալի պայմանագրում նշված գնի ավելացման հետ, իրավունք ունի հրաժարվել պայմանագրից: Այդ դեպքում կապալառուն կարող է պատվիրատուից պահանջել վճարելու աշխատանքի կատարած մասի գինը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Կապալառուի տրամադրած նյութերի և սարքավորումների, ինչպես նաև երրորդ անձանց կողմից նրան մատուցվող ծառայությունների արժեքի էական բարձրացման դեպքում, որը հնարավոր չէր

կանխատեսել պայմանագիրը կնքելիս, կապալառուն իրավունք ունի պահանջել ավելացնելու սահմանված գինը, իսկ այդ պահանջը կատարելուց պատվիրատուի հրաժարվելու դեպքում լուծել պայմանագիրը՝ սույն օրենսգրքի 467 հոդվածին համապատասխան»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 467-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանգամանքների, որոնցից ելել էին կողմերը պայմանագիրը կնքելիս, էական փոփոխությունը հիմք է պայմանագրի փոփոխման կամ լուծման համար, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով կամ չի բխում դրա էությունից:

Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում վերացնել թերությունները:

Հանգամանքների փոփոխությունն էական է համարվում, եթե դրանք այնքան են փոփոխվել, որ եթե կողմերը կարողանային դա ողջամտորեն կանխատեսել, նրանց միջև կկնքվեր էականորեն տարբեր պայմաններով պայմանագիր կամ ընդհանրապես պայմանագիր չէր կնքվի:

2. Եթե կողմերը համաձայնության չեն հասել պայմանագիրն էականորեն փոփոխված հանգամանքներին համապատասխանեցնելու կամ դրա լուծման հարցում, պայմանագիրը կարող է լուծվել, իսկ սույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված հիմքերով՝ շահագրգիռ կողմի պահանջով փոփոխվել դատարանով՝ հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությամբ՝

1) պայմանագիր կնքելու պահին կողմերը ելել են այն բանից, որ հանգամանքների նման փոփոխություն տեղի չի ունենա.

2) հանգամանքների փոփոխությունն առաջացել է այնպիսի պատճառներով, որոնք շահագրգիռ կողմը չի կարող հաղթահարել դրանք ծագելուց հետո՝ պայմանագրի բնույթով և շրջանառության պայմաններով նրանից պահանջվող հոգատարությամբ և շրջահայացությամբ.

3) պայմանագրի կատարումն առանց դրա պայմանների փոփոխման այնքան կխախտեր կողմերի՝ պայմանագրին համապատասխանող գույքային շահերի

հարաբերակցությունը և շահագրգիռ կողմին այնպիսի վնաս կպատճառեր, որը նրան զգալի չափով կզրկեր այն բանից, որին իրավունք ուներ հավակնել պայմանագիրը կնքելիս.

4) գործարար շրջանառության սովորույթներից կամ պայմանագրի էությունից չի բխում, որ հանգամանքների փոփոխության ռիսկը կրում է շահագրգիռ կողմը:

.... »:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից:

2. Կողմը կարող է պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջը դատարան ներկայացնել միայն պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումն ստանալուց կամ այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո, իսկ դրա բացակայության դեպքում՝ երեսնօրյա ժամկետում»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի և «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 18.06.2018թ. կնքված կապալային աշխատանքների կատարման «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով պայմանագիր «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով պայմանագրի 3.4.9 կետի համաձայն. «Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում վերացնել թերությունները»:

Այսպիսով վերոշարադրված փաստերից հետևում է, որ «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով պայմանագրի կնքումից հետո առաջացել է լրացուցիչ աշխատանքների կատարման և լրացուցիչ նյութեր օգտագործելու անհրաժեշտություն, ինչը էապես ավելացնելու էր պայմանագրով նախատեսված աշխատանքի համար սահմանված գինը, ինչից ելնելով ղեկավարվելով ՀՀ քաղ. օր-ի 707-րդ հոդվածի պահանջներով՝ այդ մասին տեղեկացրել է պատվիրատուին՝ «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ին հասցեագրված բազմաթիվ գրություններով և կից ներկայացված ապացույցներով՝ պահանջելով համապատասխանաբար ավելացնել «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրով սահմանված գինը կամ պայմանագրում նշված գնի ավելացման հետ համաձայն չլինելու դեպքում՝ հրաժարվել «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրից: «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ն ինչպես «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրով սահմանված գինը չի ավելացրել և չի հրաժարվել պայմանագրից, այնպես էլ չի կնքել Կապալային աշխատանքների կատարման գնման թիվ 2.127 պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիր: Դրան հակառակ «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ն, խախտելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վկայակոչված իրավադրույթները, «Մավշին» ՍՊԸ-ի և «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի միջև 18.07.2018թ. կնքված Կապալային աշխատանքների կատարման գնման թիվ 2.127 պայմանագիրը լուծել է սխալ հիմքով:

Ավելին «Մավշին» ՍՊԸ-ն ս.թ. հոկտեմբերի 5-ին «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ին ուղղված գրությամբ առաջարկել է սույն գրությունը ստանալուց հետո եռօրյա ժամկետում կնքել «Մավշին» ՍՊԸ-ի և «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի միջև 18.07.2018թ. կնքված Կապալային աշխատանքների կատարման գնման թիվ 2.127 պայմանագիրը (ծածկագիրը՝ ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18) լուծելու մասին համաձայնագիր:

Սակայն չստանալով որևէ պատասխան «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ից «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն ս.թ. հոկտեմբերի 15-ին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի՝ պայմանագիրը լուծելու պահանջի մասին:

Սակայն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից վերոնշված հայցը 29.10.2018թ. ետ է վերադարձվել հետևյալ

պատճառաբանությամբ՝ հայցվոր ընկերությունը ներկայացրել է պայմանագիրը լուծելու պահանջ, որպիսի պայմաններում պետք է հիմնավորեր մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճի կարգավորման օրենքով նախատեսված արտադատական կարգը պահպանված լինելու հանգամանքը:

Այնուհետև ս.թ. նոյեմբերի 9-ին, gnumner.am համացանցային կայքից տեղեկանալով պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ հայտարարության մասին, «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն կրկին հայց է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, որով խնդրել է՝ «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի և «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 18.06.2018թ. կնքված «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով պայմանագիրը համարել լուծված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 467-րդ հոդվածի ուժով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ. Անանյանի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ քննարկելով «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի վարքագիծը և իրականացված գործողությունները, հաշվի առնել, որ տվյալ դեպքում առաջացել է լրացուցիչ աշխատանքների կատարման և լրացուցիչ նյութերի օգտագործման անհրաժեշտություն, ինչի մասին Ընկերությունը չէր կարող տեղյակ լինել մինչև պայմանագրի կնքումը և կապալային աշխատանքների կատարման ստանձնումը (վերոհիշյալ անհրաժեշտությունը ծագել է օբյեկտի զննության արդյունքում): Ելնելով վերոգրյալից՝ «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ին հասցեագրված գրություններով պահանջել է համապատասխանաբար ավելացնել «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրով սահմանված գինը կամ պայմանագրում նշված գնի ավելացման հետ համաձայն չլինելու դեպքում՝ հրաժարվել «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրից: Այսինքն «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն իր իրավասության շրջանակներում կատարել է բոլոր հնարավոր միջոցները «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ին հայտնելով առաջացած խնդրի վերաբերյալ, քանի որ հակառակ դեպքում առանց նշված բացողումները վերացնելու «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն կկատարեր պայմանագրով սահմանված թերի աշխատանքներ, և որոշ ժամանակ անց կառաջանար «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով պայմանագրի 3.4.9 կետով սահմանված երաշխիքային ժամկետի հանգամանքը, այնինչ «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ն կարծես թե անտեսելով «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի

գրությունները և վերանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացվող՝ «ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ի մասնագիտական եզրակացությունը՝ անտեսել է ներկայացված լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտությունը»:

Ամփոփելով վերոնշված փաստերը և փաստական հանգամանքները Ընկերությունը, խնդրել է «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Մավշին» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 08.11.2018թ. ժամը 10:50-ին և 19.11.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը: 19.11.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչները հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.10.2018թ. թիվ 8.1-429 և 24.10.2018թ. թիվ 8.1-450 գրություններով հայտնել է, որ «Մավշին» ՍՊԸ-ն չի կատարել «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի և «Մավշին» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի հուլիսի 18-ին կնքված թիվ 2.127 պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման պարտավորությունը, ուստի առաջնորդվելով նշված պայմանագրի 3.1.4 կետով «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն միակողմանի լուծել է վերոհիշյալ պայմանագիրը:

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 08.11.2018թ. ժամը 10:50-ին և 19.11.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը 08.11.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստին:

4. ՍՑ-ԱՄ-2018/167 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/167 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի և «Մավշին» ՍՊԸ-ի միջև 18.07.2018թ. կնքվել է «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով աշխատանքների կատարման պետական գնման թիվ 2.127 պայմանագիրը, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն (տվյալ դեպքում՝ «Մավշին» ՍՊԸ-ն) պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ դիտարկման ծառայության ՄՌ-11 ԱԱ ռադարի ալեհավաքի էստակադայի և գմբեթի վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. Պայմանագրի թիվ 1 հավելվածի համաձայն՝ սահմանվել է «Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների» կատարման աշխատանքների նկարագիրը: Համաձայն նշված հավելվածի՝ գնման առարկա է հանդիսանում՝ «Դիտարկման ծառայության ՄՌ-11 ԱԱ ռադարի ալեհավաքի էստակադայի և գմբեթի վերանորոգման աշխատանքները»: Գնման առարկայի բնութագիր՝ ՄՌ-11 ԱԱ օբյեկտը գտնվում է Արարատի մարզի Հովտաշատ գյուղում: Աշխատանքներն իրենց մեջ ներառում են դիտարկման ծառայության ՄՌ-11 ԱԱ ռադարի ալեհավաքի գմբեթի հին ներկից մաքրում, գմբեթի ներկում ռադիոթափանցիկ ներկով՝ ХП-5184 էմալով՝ համաձայն ТУ 6-10-1887-83 տեխնիկական պայմանների, ինչպես նաև էստակադայի հին ներկից մաքրում և էստակադայի ներկում ՀԷ-132 էմալով: Վերոնշյալ աշխատանքների համար բոլոր օգտագործվող նյութերը պետք է ունենան համապատասխան հավաստագրեր և անցած լինեն լաբորատոր փորձարկումներ: Նյութերի ապահովումն իրականացվում է կապալառուի ուժերով»:

3. Պայմանագրի 1-ին կետի 1.3 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.09.2018թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

4. Պայմանագրի 3-րդ կետի 3.4.9 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում վերացնել թերությունները:

5. Պայմանագրի 3-րդ կետի 3.1.4 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե՝

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը)...:

6. «Մավշին» ՍՊԸ-ն «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ին ուղղված մի շարք գրություններով հայտնել է հետևյալը. «Պայմանգրով նախատեսված գնման առարկայի, այն է՝ դիտարկման ծառայության ՄՌ-11ԱԱ ռադարի ալեհավաքի էստակադայի և գմբեթի վերանորոգման աշխատանքների ծավալաթերթում առկա են բացթողումներ, մասնավորապես՝ մի շարք նյութերի մակնիշները բացակայում են /էլաստիկ նյութ, մածիկ/, ինչպես նաև ХП-5184 ռադիթափանցիկ ներկի արժեքը անհամեմատ ցածր գին է նշված: Ընկերության կողմից ուսումնասիրվել են ներկի արտադրող ընկերություններից տրված գները, որոնք գրեթե 6 անգամ ավելի թանկ են, քան նախահաշվում նշված գինը: Պարզվել է, որ նախահաշվում հաշվարկված է միայն ХП-5184 ներկի արժեքը, առանց իր պնդարարի,

որի մակնիշը նույնպես նշված չի: Այդ ներկի համար նախատեսված է հատուկ մակնիշի լուծիչ, սակայն նախահաշվում տրված է սովորական լուծիչի գին, որը եթե լուծվի այդ ներկի հետ, ապա ներկը կդառնա ոչ պիտանի: Նշվածին ի ապացույց «Մավշին» ՍՊԸ-ն վերը նշված գրություններով Պատվիրատուին է ներկայացրել Լակոկրասկա ընկերության կողմից ներկայացված փաստաթուղթը, ըստ որի՝ ХП-5184 ներկի հետ անհրաժեշտ է խառնել МСН-7-80 պնդացուցիչը, որը չի նախատեսվել ծավալաթերթ-նախահաշվով: Առանց այդ խառնուրդի հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքի: Հնարավոր է կիրառել շատ ավելի մատչելի պնդացուցիչներ, սակայն որակ ապահովել հնարավոր չի լինի այդ պարագայում: Ընկերությունը վերը նշված գրություններով հայտնել է նաև Պատվիրատուին, որ ծավակլաթերթ-նախահաշվով չի նշվել պնդացուցիչի տեսակը, որի պարագայում ընկերությունը կարող է խառնել այլ պնդացուցիչ, սակայն չի ցանկանում անել դա:

«Մավշին» ՍՊԸ-ն վերը նշված գրություններով Պատվիրատուին հայտնել է նաև, որ «Լակոկրասկա» ընկերության կողմից տրամադրված տեղեկության համաձայն՝ ХП-5184 ներկը օգտագործելուց առաջ, մակերևույթին պետք է քսել նախաներկ ХП-0206: Առանց այդ նախաներկի չի թույլատրվում քսել ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ХП-5184 ներկը: Նախահաշվում ընդհանրապես նշված չի եղել, որ պետք է օգտագործել նախաներկ, որի արժեքը կազմում է 2750 ռուբլի /19387/ դրամ՝ առանց ԱԱՀ-ի, և տեղափոխման ծախսերի (լրացուցիչ աշխատանք՝ լրացուցիչ նյութով՝ լրացուցիչ արժեքով):

Ընկերությունը նշել է նաև, որ ХП-5184 ներկը լուծելու համար օգտագործվում է պնդարար, իսկ ծավալաթերթ-նախահաշվում նշված չի պնդարարի անվանումը: «Լակոկրասկա» ընկերությունը տեղեկացրել է, որ ХП-5184 ներկը պետք է օգտագործել միայն МСН-7-80 պնդարարով: Ուրիշ պնդարար օգտագործելու դեպքում աշխատանքների որակը հնարավոր չի լինի ապահովել: МСН-7-80 պնդարարի գինը նախահաշվում նշված չէ, սակայն այդ կետը առանձին պետք է նշվեր: МСН-7-80 պնդարարի արժեքը կազմում է 8500 ռուբլի /59925/ դրամ առանց ԱԱՀ-ի և տեղափոխման ծախսերի:

Ընկերությունը հայտնել է նաև, որ Ծավալաթերթ-նախահաշվում նշված է, որ պետք է օգտագործել ռադիոթափանցիկ ծեփամածիկ, որի անվանումը նույնպես նշված չէ: Նաև տեղեկացրել է, որ գմբեթի կառուցվածքը այնպիսին է, որ ծեփամածիկ օգտագործելիս, այն

կարճ ժամանակում ճաքեր է տալու: Ավելին ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ այդպիսի ծեփամածիկ գոյություն չունի:

Ընկերությունը հայտնել է նաև, որ «Մավշին» ՍՊԸ-ի կողմից նշված գրություններով ներկայացված լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտության և ներկայացված այլ փաստարկների հետ համաձայն է նաև տվյալ վերանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերությունը՝ «ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ն, ինչը հավաստվում է համապատասխան գրությամբ, որտեղ մասնավորապես նշված է հետևյալը.

««ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ում ուսումնասիրվել է «Մավշին» ՍՊԸ-ի գրությունը, գրությանը կից ներկայացված համապատասխան փաստաթղթերը, այդ թվում նաև «Լակոկրասկա» ընկերության գրությունները, ինչպես նաև զննվել է վերանորոգման ենթակա օբյեկտը:

Հայտնում ենք, որ «ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ն համաձայն է, որ «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի և «Մավշին» ՍՊԸ-ի միջև 18.06.2018թ. կնքված «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրի շրջանակներում անհրաժեշտ է իրականացնել ծավալաթերթ-նախահաշվով չնախատեսված լրացուցիչ վերանորոգման աշխատանքներ՝ համապատասխանաբար լրացուցիչ նյութերով, առանց որոնց հնարավոր չի լինի ապահովել վերանորոգման աշխատանքների համապատասխան արդյունքը և որակը:

Գտնում ենք, որ ХП-5184 ներկը օգտագործելուց առաջ, մակերևույթին պետք է քսել նախաներկ ХП-0206, ինչը ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված չէ: ХП-5184 ներկը պետք է օգտագործել միայն МСН-7-80 պնդարարով, քանզի այլ պնդարար օգտագործելու դեպքում աշխատանքների որակը հնարավոր չի լինի ապահովել, մինչդեռ МСН-7-80 պնդարարի գինը նախահաշվում նշված չէ:

Վերանայման է ենթակա նաև Ծավալաթերթ-նախահաշվում նշված ռադիոթափանցիկ ծեփամածիկի օգտագործման հարցը, քանզի դրա անվանումը նույնպես նշված չի, իսկ վերանորոգման ենթակա գմբեթի կառուցվածքը այնպիսին է, որ ծեփամածիկ օգտագործելիս, այն կարճ ժամանակում, իրոք, կարող է տալ ճաքեր»:

Ամփոփելով վերը նշվածները, Ընկերությունը խնդրել է Պատվիրատուին ուսումնասիրել նշված խնդիրները և փոփոխություններ կատարել նախահաշվի մեջ:

7. Ի պատասխան «Մավշին» ՍՊԸ-ի վերոհիշյալ գրությունների՝ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն 13.08.2018թ. թիվ 8.1-338, 23.08.2018թ. թիվ 8.1-360 և 24.09.2018թ. թիվ 8.1-395 գրություններով հայտնել է հետևյալը. ««Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների» իրականացման նախահաշիվը և աշխատանքների կատարման նկարագիրը ներառված է եղել «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերում, որի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար անհրաժեշտ էր ղեկավարվել համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի հոդված 29-ի՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում, որի արդյունքում պատվիրատուի կողմից տրամադրվում է պարզաբանում կամ անհրաժեշտության դեպքում հրավերում կատարվում է համապատասխան փոփոխություններ: Սակայն Ձեր կողմից նշված ժամկետում գրավոր պարզաբանում չի պահանջվել:

Ձեր կողմից «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերի հավելված 4-ով ներկայացվել է գնային առաջարկ, որով հաստատվել է, որ Ձեր կողմից ուսումնասիրվել է «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկվել է նշված աշխատանքները իրականացնել 27 984 000 ՀՀ դրամով:

Ձեր կողմից 20.06.2018թ ներկայացված հայտի հիման վրա՝ սույն թվականի հուլիսի 18-ին ստորագրվել և կնքվել է թիվ 2.127 գնման պայմանագիրը, պայմանագրին կից հավելված 1-ը (Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման նկարագիրը), ինչպես նաև թիվ 1.1-ը (Ծավալաթերթ–նախահաշիվը): Ուստի ցանկացած անհամաձայնություն կամ անհամապատասխանություն պետք է հայտնվեր՝ համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի հոդված 29-ի պահանջների:

Ինչ վերաբերվում է Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման նկարագրում նշված «Գմբեթի ներկում ռադիոթափանցիկ ներկով՝ ХП-5184 էմալով՝ համաձայն ТУ 6-101887-83 տեխնիկական պայմաններին նշենք, որ տեխնիկական պայմաններում մանրամասն ներկայացված է ХП-5184 էմալը և նրա օգտագործման մեթոդը, որով ղեկավարվել է հեղինակը՝ նախագծա-նախահաշվային աշխատանքները

իրականացնելիս: Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ ХП-5184 էմալը լուծելու համար պետք է օգտագործվի պնդարար, ապա նշենք, որ այդ պնդարարի վերաբերյալ տվյալները տրված են էմալի տեխ. պայմանների մեջ, որը նախահաշվում արտացոլված է լուծիչի տեսքով և ըստ այդ պայմանների՝ այն МСН-7-80 պնդարարն է: Ուստի Ձեր կողմից ներկայացված «Լակոկրասկա» մասնավոր կազմակերպության տրամադրված տեղեկությունը (կամ կարծիքը) չի կարող իրավական հիմք հանդիսանալ:

Տեխ. հսկողություն իրականացնող «ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ի Ձեզ հասցեագրված նամակին նշենք, որ համաձայն ՀՀ Քաղաքաշինության նախարարության 28.04.1998թ-ի թիվ 44 հրամանի՝ «Շինարարության որակի տեխ. հսկողության իրականացման հրահանգ»-ի 3-րդ գլխի 3.4 կետի՝ տեխնիկական հսկողություն իրականացնողն իրավասու չէ փոփոխություններ մտցնել կամ թույլատրել նախագծից ցանկացած շեղումներ, ինչպես նաև միջամտել կառուցապատողի՝ շինարարության հետ կապված ֆինանսատնտեսական գործունեությանը:

Ըստ էմալի ներկայացված տեխնիկական պայմանների՝ նախաներկում չի պահանջվում, ուստի լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն չկա»: Ավելին, ՀՀ գնումների մասին օրենսդրությունը չի նախատեսում կնքված պայմանագրի գնի վերահաշվարկ, առավել ևս ավելացում, որը սահմանված է կնքված պայմանագրի 5.2 կետով»:

Ամփոփելով վերոգրյալը Պատվիրատուն առաջարկել է Ընկերությանը որպես կապալառու կատարել «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի և «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 18.06.2018թ.-ին կնքված թիվ 2.127 գնման պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

8. «Մավշին» ՍՊԸ-ն 05.10.2018թ. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ին ուղղված գրությամբ առաջարկել է սույն գրությունը ստանալուց հետո եռօրյա ժամկետում կնքել «Մավշին» ՍՊԸ-ի և «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի միջև 18.07.2018թ. կնքված Կապալային աշխատանքների կատարման գնման թիվ 2.127 պայմանագիրը (ծածկագիրը՝ ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18) լուծելու մասին համաձայնագիր:

9. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն Ընկերությանն ուղղված 05.10.2018թ. թիվ 8.1-417 գրությամբ միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված Պայմանագրից համապատասխանաբար համարելով այն լուծված, այն հիմքով, որ Պայմանագրի 1.3 կետով

սահմանված ժամկետում Ընկերության կողմից չեն կատարվել Պայմանագրով նախատեսված աշխատանքները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.11.2018թ. թիվ 27/26-3/20009-18 գրությունը, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի 15.10.2018թ. թիվ 8.1-429 և 24.10.2018թ. թիվ 8.1-450 գրությունները և կից փաստաթղթերը, «Մավշին» ՍՊԸ-ի 16.11.2018թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 700–րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կապալի պայմանագրով մի կողմը (կապալառուն) պարտավորվում է մյուս կողմի (պատվիրատուի) առաջադրանքով կատարել որոշակի աշխատանք և դրա արդյունքը սահմանված ժամկետում հանձնել պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

Նույն հոդվածի 2- մասի համաձայն՝ կապալի պայմանագիրը կնքվում է գրավոր:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կապալի պայմանագրի առանձին տեսակների (կենցաղային կապալ, շինարարական կապալ, նախագծային և հետազոտական աշխատանքների կապալ, պետական կարիքների համար կապալային աշխատանքներ) նկատմամբ կիրառվում են սույն պարագրաֆի դրույթները, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքի՝ կապալի պայմանագրի համապատասխան տեսակների մասին կանոններով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 707-րդ հոդվածի համաձայն՝

1. Կապալի պայմանագրում նշվում են կատարման ենթակա աշխատանքի գինը կամ այն որոշելու եղանակները: Պայմանագրում նման ցուցումների բացակայության դեպքում գինը որոշվում է սույն օրենսգրքի 440 հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

2. Աշխատանքի գինը կարող է որոշվել նախահաշիվ կազմելու միջոցով:

Այն դեպքում, երբ աշխատանքը կատարվում է կապալառուի կազմած նախահաշվին համապատասխան, նախահաշիվն ուժի մեջ մտնում և պայմանագրի մաս է դառնում պատվիրատուի կողմից հաստատվելու պահից:

3. Աշխատանքի գինը (նախահաշիվը) կարող է լինել մոտավոր կամ կայուն: Կապալի պայմանագրում այլ ցուցումներ չլինելու դեպքում աշխատանքի գինը համարվում է կայուն:

4. Եթե առաջացել է լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն, որի պատճառով էապես ավելացել է աշխատանքի համար սահմանված մոտավոր գինը, կապալառուն պարտավոր է այդ մասին ժամանակին զգուշացնել պատվիրատուին: Պատվիրատուն, որը համաձայն չէ կապալի պայմանագրում նշված գնի ավելացման հետ, իրավունք ունի հրաժարվել պայմանագրից: Այդ դեպքում կապալառուն կարող է պատվիրատուից պահանջել վճարելու աշխատանքի կատարած մասի գինը:

Կապալառուն, որը պատվիրատուին ժամանակին չի նախազգուշացրել պայմանագրում նշված գինն ավելացնելու անհրաժեշտության մասին, պարտավոր է կատարել պայմանագիրը՝ պահպանելով պայմանագրով որոշված գնով վարձատրություն ստանալու իրավունքը:

5. Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ պատվիրատուն՝ նվազեցնելու կայուն գինը նաև այն դեպքում, երբ կապալի պայմանագիրը կնքելու պահին բացառվում էր կատարվող աշխատանքների կամ դրանց համար անհրաժեշտ ծախսերի

լրիվ ծավալը նախատեսելու հնարավորությունը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

6. Կապալառուի տրամադրած նյութերի և սարքավորումների, ինչպես նաև երրորդ անձանց կողմից նրան մատուցվող ծառայությունների արժեքի էական բարձրացման դեպքում, որը հնարավոր չէր կանխատեսել պայմանագիրը կնքելիս, կապալառուն իրավունք ունի պահանջել ավելացնելու սահմանված գինը, իսկ այդ պահանջը կատարելուց պատվիրատուի հրաժարվելու դեպքում լուծել պայմանագիրը՝ սույն օրենսգրքի 467 հոդվածին համապատասխան»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 467-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանգամանքների, որոնցից ելել էին կողմերը պայմանագիրը կնքելիս, էական փոփոխությունը հիմք է պայմանագրի փոփոխման կամ լուծման համար, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով կամ չի բխում դրա էությունից:

Հանգամանքների փոփոխությունն էական է համարվում, եթե դրանք այնքան են փոփոխվել, որ եթե կողմերը կարողանային դա ողջամտորեն կանխատեսել, նրանց միջև կկնքվեր էականորեն տարբեր պայմաններով պայմանագիր կամ ընդհանրապես պայմանագիր չէր կնքվի:

2. Եթե կողմերը համաձայնության չեն հասել պայմանագիրն էականորեն փոփոխված հանգամանքներին համապատասխանեցնելու կամ դրա լուծման հարցում, պայմանագիրը կարող է լուծվել, իսկ սույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված հիմքերով՝ շահագրգիռ կողմի պահանջով փոփոխվել դատարանով՝ հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությամբ՝

1) պայմանագիր կնքելու պահին կողմերը ելել են այն բանից, որ հանգամանքների նման փոփոխություն տեղի չի ունենա.

2) հանգամանքների փոփոխությունն առաջացել է այնպիսի պատճառներով, որոնք շահագրգիռ կողմը չի կարող հաղթահարել դրանք ծագելուց հետո՝ պայմանագրի բնույթով և շրջանառության պայմաններով նրանից պահանջվող հոգատարությամբ և շրջահայացությամբ.

3) պայմանագրի կատարումն առանց դրա պայմանների փոփոխման այնքան կխախտեր կողմերի՝ պայմանագրին համապատասխանող գույքային շահերի

հարաբերակցությունը և շահագրգիռ կողմին այնպիսի վնաս կպատճառեր, որը նրան զգալի չափով կզրկեր այն բանից, որին իրավունք ուներ հավակնել պայմանագիրը կնքելիս.

4) գործարար շրջանառության սովորույթներից կամ պայմանագրի էությունից չի բխում, որ հանգամանքների փոփոխության ռիսկը կրում է շահագրգիռ կողմը:

.... »:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի և «Մավշին» ՍՊԸ-ի միջև 18.07.2018թ. կնքվել է «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով աշխատանքների կատարման պետական գնման թիվ 2.127 պայմանագիրը, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն (տվյալ դեպքում՝ «Մավշին» ՍՊԸ-ն) պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ դիտարկման ծառայության ՄՌ-11 ԱԱ ռադարի ալեհավաքի էստակադայի և գմբեթի վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանվել է «Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների» կատարման նկարագիրը: Համաձայն նշված հավելվածի՝ գնման առարկա է հանդիսանում՝ «Դիտարկման ծառայության ՄՌ-11 ԱԱ ռադարի ալեհավաքի էստակադայի և գմբեթի վերանորոգման աշխատանքները»: Գնման առարկայի բնութագիր՝ ՄՌ-11 ԱԱ օբյեկտը գտնվում է Արարատի մարզի Հովտաշատ գյուղում: Աշխատանքներն իրենց մեջ ներառում են դիտարկման ծառայության ՄՌ-11 ԱԱ ռադարի ալեհավաքի գմբեթի հին ներկից մաքրում, գմբեթի ներկում ռադիոթափանցիկ ներկով՝ ХП-5184 էմալով՝ համաձայն ТУ 6-10-1887-83 տեխնիկական պայմանների, ինչպես նաև էստակադայի հին ներկից մաքրում և էստակադայի ներկում ՀԼ-132 էմալով: Վերոնշյալ աշխատանքների համար բոլոր օգտագործվող նյութերը պետք է ունենան համապատասխան հավաստագրեր և անցած լինեն լաբորատոր փորձարկումներ: Նյութերի ապահովումն իրականացվում է կապալառուի ուժերով»:

Պայմանագրի 1-ին կետի 1.3 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.09.2018թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրի 3-րդ կետի 3.4.9 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում վերացնել թերությունները:

Պայմանագրի 3-րդ կետի 3.1.4 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե՝

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը)...:

«Մավշին» ՍՊԸ-ն «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ին ուղղված 06.08.2018թ., 13.08.2018թ., 18.09.2018թ. և 28.09.2018թ. գրություններով հայտնել է հետևյալը. «Պայմանագրով նախատեսված գնման առարկայի, այն է՝ դիտարկման ծառայության ՄՌ-11ԱԱ ռադարի ալեհավաքի էստակադայի և գմբեթի վերանորոգման աշխատանքների ծավալաթերթում առկա են բացթողումներ, մասնավորապես՝ մի շարք նյութերի մակնիշները բացակայում են /էլաստիկ նյութ, մածիկ/, ինչպես նաև ԽՊ-5184 ռադիթափանցիկ ներկի արժեքը անհամեմատ ցածր գին է նշված: Ընկերության կողմից ուսումնասիրվել են ներկի արտադրող ընկերություններից տրված գները, որոնք գրեթե 6 անգամ ավելի թանկ են, քան նախահաշվում նշված գինը: Պարզվել է, որ նախահաշվում հաշվարկված է միայն ԽՊ-5184 ներկի արժեքը, առանց իր պնդարարի, որի մակնիշը նույնպես նշված չէ: Այդ ներկի համար նախատեսված է հատուկ մակնիշի լուծիչ, սակայն նախահաշվում տրված է սովորական լուծիչի գին, որը եթե լուծվի այդ ներկի հետ, ապա ներկը կդառնա ոչ պիտանի: Նշվածին ի ապացույց «Մավշին» ՍՊԸ-ն վերը նշված գրություններով Պատվիրատուին է ներկայացրել «Լակոկրասկա» ընկերության կողմից ներկայացված փաստաթուղթը, ըստ որի՝ ԽՊ-5184 ներկի հետ անհրաժեշտ է խառնել MCH-7-80 պնդացուցիչը, որը չի նախատեսվել ծավալաթերթ-նախահաշվով: Ընկերությունը նշել է, որ առանց այդ խառնուրդի հնարավոր

չէ հասնել ցանկալի արդյունքի: Հնարավոր է կիրառել շատ ավելի մատչելի պնդացուցիչներ, սակայն որակ ապահովել հնարավոր չի լինի այդ պարագայում:

«Մավշին» ՍՊԸ-ն վերը նշված գրություններով Պատվիրատուին հայտնել է, որ «Լակոկրասկա» ընկերության կողմից տրամադրված տեղեկության համաձայն՝ ХП-5184 ներկը օգտագործելուց առաջ, մակերևույթին պետք է քսել նախաներկ ХП-0206: Առանց այդ նախաներկի չի թույլատրվում քսել ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ХП-5184 ներկը: Նախահաշվում ընդհանրապես նշված չի եղել, որ պետք է օգտագործել նախաներկ, որի արժեքը կազմում է 2750 ռուբլի /19387/ դրամ՝ առանց ԱԱՀ-ի, և տեղափոխման ծախսերի (լրացուցիչ աշխատանք՝ լրացուցիչ նյութով՝ լրացուցիչ արժեքով):

Ընկերությունը նշել է նաև, որ ХП-5184 ներկը լուծելու համար օգտագործվում է պնդարար, իսկ ծավալաթերթ-նախահաշվում նշված չի պնդարարի անվանումը: «Լակոկրասկա» ընկերությունը տեղեկացրել է, որ ХП-5184 ներկը պետք է օգտագործել միայն МСН-7-80 պնդարարով: Ուրիշ պնդարար օգտագործելու դեպքում աշխատանքների որակը հնարավոր չի լինի ապահովել: МСН-7-80 պնդարարի գինը նախահաշվում նշված չէ, սակայն այդ կետը առանձին պետք է նշվեր: МСН-7-80 պնդարարի արժեքը կազմում է 8500 ռուբլի /59925/ դրամ առանց ԱԱՀ-ի և տեղափոխման ծախսերի:

Ընկերությունը հայտնել է նաև, որ Ծավալաթերթ-նախահաշվում նշված է, որ պետք է օգտագործել ռադիոթափանցիկ ծեփամածիկ, որի անվանումը նույնպես նշված չէ: Նաև տեղեկացրել է, որ գմբեթի կառուցվածքը այնպիսին է, որ ծեփամածիկ օգտագործելիս, այն կարճ ժամանակում ճաքեր կտա: Ավելին ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ այդպիսի ծեփամածիկ գոյություն չունի:

Ընկերությունը հայտնել է նաև, որ «Մավշին» ՍՊԸ-ի կողմից նշված գրություններով ներկայացված լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտության և ներկայացված այլ փաստարկների հետ համաձայն է նաև տվյալ վերանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերությունը՝ «ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ն, ինչը հավաստվում է համապատասխան գրությամբ, որտեղ մասնավորապես նշված է հետևյալը.

««ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ում ուսումնասիրվել է «Մավշին» ՍՊԸ-ի գրությունը, գրությանը կից ներկայացված համապատասխան փաստաթղթերը, այդ թվում նաև «Լակոկրասկա» ընկերության գրությունները, ինչպես նաև զննվել է վերանորոգման ենթակա օբյեկտը:

Հայտնում ենք, որ «ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ն համաձայն է, որ «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի և «Մավշին» ՍՊԸ-ի միջև 18.06.2018թ. կնքված «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրի շրջանակներում անհրաժեշտ է իրականացնել ծավալաթերթ-նախահաշվով չնախատեսված լրացուցիչ վերանորոգման աշխատանքներ՝ համապատասխանաբար լրացուցիչ նյութերով, առանց որոնց հնարավոր չի լինի ապահովել վերանորոգման աշխատանքների համապատասխան արդյունքը և որակը:

Գտնում ենք, որ ХП-5184 ներկը օգտագործելուց առաջ, մակերևույթին պետք է քսել նախաներկ ХП-0206, ինչը ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված չէ: ХП-5184 ներկը պետք է օգտագործել միայն МСН-7-80 պնդարարով, քանզի այլ պնդարար օգտագործելու դեպքում աշխատանքների որակը հնարավոր չի լինի ապահովել, մինչդեռ МСН-7-80 պնդարարի գինը նախահաշվում նշված չէ:

Վերանայման է ենթակա նաև Ծավալաթերթ-նախահաշվում նշված ռադիոթափանցիկ ծեփամածիկի օգտագործման հարցը, քանզի դրա անվանումը նույնպես նշված չէ, իսկ վերանորոգման ենթակա գմբեթի կառուցվածքը այնպիսին է, որ ծեփամածիկ օգտագործելիս, այն կարճ ժամանակում, իրոք, կարող է տալ ճաքեր»:

Ամփոփելով վերը նշվածները, Ընկերությունը խնդրել է Պատվիրատուին ուսումնասիրել նշված խնդիրները և փոփոխություններ կատարել նախահաշվի մեջ:

Ի պատասխան «Մավշին» ՍՊԸ-ի վերոհիշյալ գրությունների՝ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն 13.08.2018թ. թիվ 8.1-338, 23.08.2018թ. թիվ 8.1-360 և 24.09.2018թ. թիվ 8.1-395 գրություններով հայտնել է հետևյալը. ««Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների» իրականացման նախահաշիվը և աշխատանքների կատարման նկարագիրը ներառված է եղել «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերում, որի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար անհրաժեշտ էր ղեկավարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով, որի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ

օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում, որի արդյունքում պատվիրատուի կողմից տրամադրվում է պարզաբանում կամ անհրաժեշտության դեպքում հրավերում կատարվում է համապատասխան փոփոխություններ: Սակայն Ձեր կողմից նշված ժամկետում գրավոր պարզաբանում չի պահանջվել:

Ձեր կողմից «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերի հավելված 4-ով ներկայացվել է գնային առաջարկ, որով հաստատվել է, որ Ձեր կողմից ուսումնասիրվել է «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկվել է նշված աշխատանքները իրականացնել 27 984 000 ՀՀ դրամով:

Ձեր կողմից 20.06.2018թ ներկայացված հայտի հիման վրա՝ սույն թվականի հուլիսի 18-ին ստորագրվել և կնքվել է թիվ 2.127 գնման պայմանագիրը, պայմանագրին կից հավելված 1-ը (Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման նկարագիրը), ինչպես նաև թիվ 1.1-ը (Ծավալաթերթ–նախահաշիվը): Ուստի ցանկացած անհամաձայնություն կամ անհամապատասխանություն պետք է հայտնվեր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջներին համաձայն:

Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ ХП-5184 էմալը լուծելու համար պետք է օգտագործվի պնդարար, ապա նշենք, որ այդ պնդարարի վերաբերյալ տվյալները տրված են էմալի տեխ. պայմանների մեջ, որը նախահաշվում արտացոլված է լուծիչի տեսքով և ըստ այդ պայմանների՝ այն МСН-7–80 պնդարարն է: Ուստի Ձեր կողմից ներկայացված «Լակոկրասկա» մասնավոր կազմակերպության տրամադրված տեղեկությունը (կամ կարծիքը) չի կարող իրավական հիմք հանդիսանալ:

Ինչ վերաբերվում է Տեխ. հսկողությունն իրականացնող «ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ի դիրքորոշմանը, ապա ՀՀ Քաղաքաշինության նախարարության 28.04.1998թ–ի թիվ 44 հրամանի համաձայն՝ «Շինարարության որակի տեխ. հսկողության իրականացման հրահանգ»–ի 3-րդ գլխի 3.4 կետի՝ տեխնիկական հսկողություն իրականացնողն իրավասու չէ փոփոխություններ մտցնել կամ թույլատրել նախագծից ցանկացած շեղումներ, ինչպես նաև միջամտել կառուցապատողի՝ շինարարության հետ կապված ֆինանսատնտեսական գործունեությանը:

Ըստ էմալի ներկայացված տեխնիկական պայմանների՝ նախաներկում չի պահանջվում, ուստի լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն չկա»: Ավելին, ՀՀ գնումների մասին օրենսդրությունը չի նախատեսում կնքված պայմանագրի գնի վերահաշվարկ, առավել ևս ավելացում, որը սահմանված է կնքված պայմանագրի 5.2 կետով»:

Ամփոփելով վերոգրյալը Պատվիրատուն առաջարկել է Ընկերությանը որպես կապալառու կատարել «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի և «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 18.06.2018թ.-ին կնքված թիվ 2.127 գնման պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

«Մավշին» ՍՊԸ-ն 05.10.2018թ. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ին ուղղված գրությամբ առաջարկել է սույն գրությունը ստանալուց հետո եռօրյա ժամկետում կնքել «Մավշին» ՍՊԸ-ի և «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի միջև 18.07.2018թ. կնքված Կապալային աշխատանքների կատարման գնման թիվ 2.127 պայմանագիրը (ծածկագիրը՝ ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18) լուծելու մասին համաձայնագիր:

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն Ընկերությանն ուղղված 05.10.2018թ. թիվ 8.1-417 գրությամբ միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված Պայմանագրից համապատասխանաբար համարելով այն լուծված, այն հիմքով, որ Պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետում Ընկերության կողմից չեն կատարվել Պայմանագրով նախատեսված աշխատանքները:

Վերոգրյալով պայմանավորված, արձանագրում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 707-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ***Կապալառուի տրամադրած նյութերի և սարքավորումների, ինչպես նաև երրորդ անձանց կողմից նրան մատուցվող ծառայությունների արժեքի էական բարձրացման դեպքում***, որը հնարավոր չէր կանխատեսել պայմանագիրը կնքելիս, կապալառուն իրավունք ունի պահանջել ավելացնելու սահմանված գինը, իսկ այդ պահանջը կատարելուց պատվիրատուի հրաժարվելու դեպքում լուծել պայմանագիրը՝ սույն օրենսգրքի 467 հոդվածին համապատասխան»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 467-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանգամանքների, որոնցից ելել էին կողմերը պայմանագիրը կնքելիս, էական փոփոխությունը հիմք է պայմանագրի փոփոխման կամ լուծման համար, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով կամ չի բխում դրա էությունից:

Հանգամանքների փոփոխությունն էական է համարվում, եթե դրանք այնքան են փոփոխվել, որ եթե կողմերը կարողանային դա ողջամտորեն կանխատեսել, նրանց միջև կկնքվեր էականորեն տարբեր պայմաններով պայմանագիր կամ ընդհանրապես պայմանագիր չէր կնքվի:

2. Եթե կողմերը համաձայնության չեն հասել պայմանագիրն էականորեն փոփոխված հանգամանքներին համապատասխանեցնելու կամ դրա լուծման հարցում, պայմանագիրը կարող է լուծվել, իսկ սույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված հիմքերով՝ շահագրգիռ կողմի պահանջով փոփոխվել դատարանով՝ հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությամբ՝

1) պայմանագիր կնքելու պահին կողմերը ելել են այն բանից, որ հանգամանքների նման փոփոխություն տեղի չի ունենա.

2) հանգամանքների փոփոխությունն առաջացել է այնպիսի պատճառներով, որոնք շահագրգիռ կողմը չի կարող հաղթահարել դրանք ծագելուց հետո՝ պայմանագրի բնույթով և շրջանառության պայմաններով նրանից պահանջվող հոգատարությամբ և շրջահայացությամբ.

3) պայմանագրի կատարումն առանց դրա պայմանների փոփոխման այնքան կխախտեր կողմերի՝ պայմանագրին համապատասխանող գույքային շահերի հարաբերակցությունը և շահագրգիռ կողմին այնպիսի վնաս կպատճառեր, որը նրան զգալի չափով կզրկեր այն բանից, որին իրավունք ուներ հավակնել պայմանագիրը կնքելիս.

4) գործարար շրջանառության սովորույթներից կամ պայմանագրի էությունից չի բխում, որ հանգամանքների փոփոխության ռիսկը կրում է շահագրգիռ կողմը:

.... »:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից:

Այսպիսով՝ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի և «Մավշին» ՍՊԸ-ի միջև 18.06.2018թ. կնքված «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման թիվ 2.127 պայմանագիրը միակողմանի Պատվիրատուի կողմից լուծվել է Ընկերության կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով: Սակայն ուսումնասիրելով Ընկերության «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ին ուղղված գրությունները, արձանագրում եմ, որ Պայմանագրով նախատեսված վերանորոգման աշխատանքների համապատասխան արդյունքը և որակը ապահովելու նպատակով Պայմանագրի կնքումից հետո փաստացի առաջացել է լրացուցիչ աշխատանքների կատարման և լրացուցիչ նյութեր օգտագործելու անհրաժեշտություն, որը փաստվել է նաև աշխատանքների տեխնիկական հսկողությունն իրականացնող «ՄԳ Պրոմիլ» ՍՊԸ-ի կողմից տրված մասնագիտական կարծիքով:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Ընկերությունը ղեկավարվելով ՀՀ քաղ. օրենսգրքի 707-րդ հոդվածի պահանջներով՝ այդ մասին բազմաթիվ գրություններով տեղեկացրել է «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ին՝ առաջարկելով համապատասխանաբար ավելացնել «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրով սահմանված գինը կամ պայմանագրում նշված գնի ավելացման հետ համաձայն չլինելու դեպքում՝ հրաժարվել «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրից:

Այսպիսով, «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն իր իրավասության շրջանակներում կատարել է բոլոր հնարավոր միջոցները «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ին հայտնելով առաջացած խնդրի վերաբերյալ, քանի որ հակառակ դեպքում առանց նշված բացթողումները վերացնելու «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն կկատարեր պայմանագրով սահմանված թերի աշխատանքներ, և որոշ ժամանակ անց կառաջանար լուրջ թերություններ և խոտանված աշխատանք «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-06/18» ծածկագրով պայմանագրի 3.4.9 կետով սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում, որի դեպքում Պայմանագրի համաձայն Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում Կապալառուն պարտավոր կլիներ երաշխիքային ժամկետի ընթացքում իր հաշվին վերացնելու ի հայտ եկած աշխատանքի թերությունները:

Այսպիսով, գտնում եմ, որ նման պայմաններում Ընկերության վարքագիծը չի կարող գնահատվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրով ստանձնած պարտականությունները պատշաճ կատարելուց, ուստի պայմանագրային պարավորությունների չկատարումը տվյալ պայմաններում պայմանավորված է եղել Ընկերության կամքից և վարքագծից անկախ հանգամանքներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.11.2018թ. թիվ 27/26-3/20009-18 գրությամբ «Մավշին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08911644) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ